

ՀԱՐԳԵԼԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՊԱՌՈՂ

Հիմնվելով ՄԱԿ-ի Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքների վրա, ինչպես նաև կարևորելով վիճակագրական տեղեկատվության սպառողների մշտական կապի ամրապնդումը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) մշակել է [«Վիճակագրական տեղեկատվության սպառողների»](#) հարցաթերթ՝ նրանց վերաբերմունքը, ակնկալիքներն ու պահանջմունքներն ուսումնասիրելու նպատակով:

Ձեր անկեղծ և անկաշկանդ պատասխանները կնպաստեն ՀՀ ԱՎԾ կողմից վիճակագրական տեղեկատվության տարածման և պաշտոնական վիճակագրության մատուցման որակի հետագա բարելավմանը:

Լրացված հարցաթերթը խնդրում ենք ուղարկել ստորև ներկայացվող էլեկտրոնային հասցեով՝ svod@armstat.am:

Հարցաթերթի հետ կապված բոլոր հարցերով կարող եք դիմել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին՝ 52-33-56 և 52-45-42 հեռախոսահամարներով:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝



Ս. Մնացականյան

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ